



ISSN: 1829-1651



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

«Ֆոն դեր Լայենը Ալիեւին գովաբանում է, քրիստոնյաների մասին՝ լռում»

Կաթոլիկական լրատվական գործակալությունը՝ CNA-ն հուլիսի 7-ին քննադատել է ԵՄ հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն դեր Լայենին. «Ադրբեյջանի նախագահ Ալիեւին Բաքվում գովաբանում է՝ որպես խաղաղարարի, իսկ քրիստոնյաների հետապնդումների մասին՝ լռում, գրում է CNA-ն եւ հղում տալով Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության (CSI) տվյալներին, հավելում՝ «նա չի հիշատակել ԼԴ-ից մոտ 150 000 քրիստոնյա հայերի վտարման, 10-նյակ հայ պատանդների բանտարկության մասին: Ֆոն դեր Լայենը շնորհակալություն է հայտնել Ալիեւին՝«չենք մոռացել, որ երբ 2022-ին ՌԴ էներգիան զենք դարձրեց, գազը փակեց, Ադրբեյջանը մատակարարեց, բարելավելով Եվրոպայի էներգետիկ անվտանգությունը»»: Նա երեւանում որեւէ բառ չի ասել Փաշինյանի հակառակորդների կալանավորման, ԼԴ-ից տեղահանված անձանց վերադարձի իրավունքի, պատանդների ծակատագրի մասին:

ԱՆԱՎՏԻՍ ՀՈՒՄԵՐՅԱՆ, Գերմանիա

41-64-ի մոգությունը

Ընտրություններից հետո, երբ իշխանության համար առաջնահերթ լուծման բազմաթիվ խնդիրներ կան, այդ թվում՝ արտահանումների, դիզվառելիքի ներկրման առաջիկա դժվարությունների դեմն առնելու (ՌԴ-ն հուլիսի ութին դիզվառելիքի արտահանման լիակատար արգելանք է սահմանել), առաջիկա ծնունդ համար պարենային անվտանգության խնդիրներ լուծելու, իշխանությունն այլ ամբողջահաճո գործերով է զբաղված եւ օխլոսի համար շուկաներ է կազմակերպում: Լավ, չէ՞ք նկատում ՌԴ-ի բենզինի հերթերը, չորեքշաբթի լույս հինգշաբթի գիշերը մեր քթի տակ վերսկսված պատերազմը (ԱՄՆ-ը կրկին հարվածել է Իրանին),

Իշխանությանն ուզում են հարցնել՝ զիտե՞ք, թե Ծառուկյանին վայրենի, հակապրոֆեսիոնալ ձեւով գետին տապալելն ինչ հակառակցիա է առաջացրել ձեր հանդեպ անգամ այն մարդկանց մոտ, ովքեր ձեր կողմնակիցն են, մանավանդ՝ երբ նա ոչ մի դիմադրություն ցույց չէր տալիս, իսկ այդ տեսարանը տեղի է ունեցել ոչ թե նրան ձեռքակալելիս, այլ առավոտյան խուզարկության համար նրա տուն մտնելիս: Եվրոպա գնալու համար այդպիսի տեսարաններ են պետք, տնտեսական աշխատող միավորների կասեցում է պետք: Կամ եթե այդ աստիճան հակաօրինական գործունեություն են ծավալել ընդդիմադիր լիդերները, ինչո՞ւ եք սպասել ընտրությունների ավարտին՝ հազար ասեկոսեի հիմք տալով, մինչեւ ընտրությունները կանխելիք այդ ապօրինությունները, քանի որ հիմա դրանք նմանվում են հետընտրական հետապնդման ու վախի մթնոլորտ հաստատելուն, խոստացված



«բոմբ դարձնելուն», համեմայնդեա՝ հանրության մեջ այդպիսի տեսակետները շատ են, ու ոչ մի իրավական ձեւակերպում չի փոխի հանրության համոզմունքը: Ճիշտն անվտանգության մարմինների հանդարտ, պրոֆեսիոնալ, առանց շուկաների աշխատանքը պիտի լինեն, այս ի՞նչ մոլություն է ցուցադրական աշխատանքի:

⇒3

Իրանը ՆԱՏՕ-ի ուժադրության կենսրոնում

Անկասրայի գազաթնաժողովի հիմնական ուղեշնչերը

ԳՐԻԳՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Անկարան հուլիսի 7-8-ը հյուրընկալեց ՆԱՏՕ-ի 36-րդ գազաթնաժողովը, որն անցկացվեց Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանի** հյուրընկալությամբ եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար **Մարկ Ռյուտեն**ի նախագահությամբ: Հանդիպմանը մասնակցեցին ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը**, ինչպես նաեւ դաշինքի անդամ երկրների ղեկավարներն ու գործընկեր պետությունների ներկայացուցիչները:

Գազաթնաժողովի օրակարգի հիմնական թեմաներն էին համաշխարհային եւ տարածաշրջանային անվտանգության մարտահրավերները, ՆԱՏՕ-ի ապագա ռազմավարական առաջնահերթությունները, ինչպես նաեւ պաշտպանական ծախսերի ավելացման վերաբերյալ նախորդ՝ Հաագայի գազաթնաժողովում ստանձնած պարտավորությունների իրականացումը: Ըստ այդ որոշման, անդամ երկրները մինչեւ 2035 թվականը պետք է պաշտպանության ոլորտին հատկացնեն իրենց համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 5 տոկոսը:

Գազաթնաժողովից առաջ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն հայտարարել էր, որ ակնկալում է պաշտպանական ծախսերի ավելացման վերաբերյալ հստակ եւ գործնական ծրագրերի ներկայացում: Նա նաեւ տեղեկացրել էր, որ ՆԱՏՕ-ի պաշտպանական արդյունաբերության համաժողովի շրջանակում նախատեսվում է ստորագրել տասնյակ միլիարդավոր դոլարների նոր պայմանագրեր՝ դաշինքի պաշտպանական կարողությունների ամրապնդման նպատակով:

Ուկրաինային շարունակվող աջակցությունը եւս մնաց օրակարգի առանցքային հարցերից մեկը: Ռուսաստանի դեմ պատերազմի պայմաններում դաշինքի ղեկավարները քննարկեցին Կիեւին ցուցաբերվող ռազմական աջակցության շարունակությունը, մասնավորապես՝ հակաօդային պաշտպանության ոլորտում:

⇒2

Եթե ճանաչումը «քաղաքական թատրոն չէ», ապա Քնեսեթը որեւէ ճնշման չի ենթարկվի

ԱՆԱՎՏԻՍ ՀՈՒՄԵՐՅԱՆ

Գերմանիա

Մինչ մեր սույն հրապարակումը ուրբաթ՝ հուլիսի 10-ին լույս կտեսնի «Ազգի» տպագիր եւ առցանց տարբերակներով, հնարավոր է տեղյակ լինենք՝ Իսրայելի Քնեսեթը ճանաչե՞ց Հայոց ցեղասպանությունը: Որեւէ պաշտոնական ծանուցում չգտանք, բայց «Իսրայելահայեր» թերթի խմբագիր **Արտյոն Չեռնոմոնյանը** ֆեյսբուքում էր, որ հուլիսի 8-ին միատի օրակարգում քննվելու է նաեւ հիշյալ բանաձեւը: Ի՞նչ արդյունք էլ լինի, ստորեւ ներկայացվողն ուշագրավ է, քանի որ Իսրայելի կառավարության ճանաչմանը հաջորդած ՀՀ պաշտոնական արձագանքին է վերաբերում, որ ամփոփում ենք մի քանի լրատվականների մեկնաբանների հայացքով:

«Իսրայելի կառավարության՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանը հաջորդած ՀՀ սառն արձագանքն ամեն ինչ պատմում է: Մինչդեռ Թուրքիան եւ Ադրբեյջան»

նը խստորեն դատապարտեցին Իսրայելի կառավարության քայլը, վարչապետ Փաշինյանը հայտարարեց, թե երեւանը արձագանքելու անհրաժեշտություն չի համարում եւ ցեղասպանությունը չի վերածի քաղաքական զենքի», գրում է **Itamar Eichner** ը՝ **Ynet** լրատվականի հունիսի 30-ի հրապարակման մեջ:

«Փաշինյանի օրոք Հայաստանը փորձում է մերժելու Արեւմուտքին, միաժամանակ պահպանելով եւ խորացնելով Իրանի հետ կապերը: Թեհրանի հետ կապը մասամբ ձեւավորվում է Իսրայելի՝ Հայաստանի մրցակից Ադրբեյջանի հետ սերտ հարաբերություններով: Տարածաշրջանային եռանկյունին երեւանի համար Իսրայելի որոշմանն անդրադառնալու բարդ հանգույց է ստեղծում: Մինչդեռ ցեղասպանության ճանաչումը վաղուց ի վեր պատմական եւ բարոյական նշանակություն ունի հայերի համար, սակայն Իսրայելի ճանաչման այս քայլը, ժամանակացույցը եւ քաղաքական համատեքստը

դժվարացնում են Հայաստանի համար այն՝ որպես համերաշխության պարզ ժեստ ընդունել: Վերջին տարիներին Հայաստանը նույնպես քայլեր է ձեռնարկել, որ նրան հեռացրել են Իսրայելի տարածաշրջանային դիրքորոշումից:

Մոտ երկու տարի առաջ Երեւանը հայտարարեց Պաղեստինը ճանաչելու մասին: Թուրքիան եւ Ադրբեյջանը քաղաքական առնակատմամբ ընդունեցին Իսրայելի ճանաչումը: Հայաստանը միտումնավոր սառն արձագանքեց: Փաշինյանի ուղերձն այն է, որ արդի աշխարհաքաղաքական մարտերում ցեղասպանությունը խաղաքարտ չէ, նույնիսկ երբ ճանաչում է այն մի երկիր, որ տասնամյակներ խուսափել է դա անել: Այդ առումով Հայաստանի լռությունը կարող է լինել ամենահստակ ազդանշանը: Իսրայելի ճանաչումը պատմական քայլ է, բայց երեւանը կարծես պատրաստ չէ արտոնել, որ այն սահմանի իր արտաքին քաղաքականությունը կամ դառնա ինչ-որ մեկի տարածաշրջանային դիմակայության մաս»:

⇒2

Սակայն գազաթնաժողովի ընթացքում նախատեսվում էր առանձնահատուկ ուշադրության արժանացնել նաեւ Իրանին առնչվող հարցերը: ԱՄՆ վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում նշել էր, որ օրակարգում կարող է ընդգրկվել նաեւ Հորմուզի նեղուցի անվտանգության հարցը: Նրա խոսքով, նախագահ Թրամփը ակնկալում է, որ տարածաշրջանային վերջին լարվածությունից հետո ՆԱՏՕ-ի դաշնակիցները ավելի մեծ պատասխանատվության կմասնակցեն Հորմուզի նեղուցում առետրային նավագնացության անվտանգության ապահովմանը:

Միաժամանակ, Մարկ Ռյուտեն, պատասխանելով Հորմուզի նեղուցում ՆԱՏՕ-ի հնարավոր առաքելության վերաբերյալ հարցին, նշել է, որ այս պահին նման նախաձեռնություն չի քննարկվում: Նրա խոսքով՝ «Իրանը գտնվում է ՆԱՏՕ-ի աշխարհագրական պատասխանատվության գոտուց դուրս», սակայն եթե ապագայում դաշինքի ներգրավվածությունը կարողանա օգտակար լինել, այդ հնարավորությունը կարող է զննհատվել:

Ռյուտեն անդրադարձել է նաեւ Ուկրաինայի պատերազմի համատեքստում Իրանի դերին՝ ընդգծելով, որ Հինաստանը, Հյուսիսային Կորեան եւ Իրանը շարունակում են մնալ Ռուսաստանի հիմնական աջակիցները: Այս գնահատականը վկայում է, որ ՆԱՏՕ-ն Իրանը դիտարկում է ոչ միայն որպես Մերձավոր Արեւելքի տարածաշրջանային դերակատար, այլեւ որպես եվրատլանտյան անվտանգության վրա ազդեցություն ունեցող գործոն:

Գազաթնաժողովի կարեւորությունը պայմանավորված էր նաեւ Եվրոպայում անվտանգության շարունակական վատթարացմամբ: Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ **Կայա Կալասը** նշել է. «Յուրաքանչյուր գազաթնաժողով պատմական է համարվում, սակայն այս անգամ դա իսկապես այդպես է»:

⇒2

Իրանը և ԱՄՆ-ի ուժադրության կենսրոնում

Անկարայի զազաթնաժողովի հիմնական ուղերձները



«Թաքցրեք ձեր երեխաներին, Թրամփն է գալիս» գրությամբ պաստառ, որն արժանացել էր լայն արձագանքի:

Ընդհանուր առմամբ, Դոնալդ Թրամփի նախագահության տարիներին ԱՄՆ-ի զազաթնաժողովները մշտապես անցկացվել են լարված մթնոլորտում: Ամենահայտնի օրի-

նակներից մեկը 2018 թվականի զազաթնաժողովն էր, երբ Թրամփը սպառնացել էր, որ ԱՄՆ-ը կարող է վերանայել իր մասնակցությունը ԱՄՆ-ին, եթե Եվրոպացի դաշնակիցները չավելացնեն պաշտպանական ծախսերը:

Այս անգամ էլ, Անկարայի զազաթնաժողովից առաջ,

լարվածությունն ավելի մեծ էր, քանի որ Թրամփի վարչակազմը նպատակ ունի վերանայել Եվրոպայի անվտանգության ոլորտում ԱՄՆ ներգրավվածության ծավալը:

Նաեւ Թրամփը դժգոհ է եվրոպացի մի շարք առաջնորդներից՝ Իրանի դեմ ռազմական գործողություններին չաջակցելու պատճառով, ինչը եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ Իրանի հարցը դարձել է ոչ միայն Մերձավոր Արեւելքի, այլեւ տրանսատլանտյան հարաբերությունների կարեւոր թեմաներից մեկը:

Ամփոփելով վերը նշվածը՝ արձանագրենք, որ Անկարայում կայացած ԱՄՆ-ի 36-րդ զազաթնաժողովը կենտրոնացած էր պաշտպանական ծախսերի ավելացման, Ուկրաինային աջակցության եւ

Եվրատլանտյան անվտանգության մարտահրավերների շուրջ: Սակայն քննարկումների կարեւոր ուղղություններից մեկը նաեւ Իրանին վերաբերող հարցերն էին: Թեւեւ ԱՄՆ-ն ներկայումս չի նախատեսում առաքելություն Զորմուզի նեղուցում, դաշինքը շարունակում է ուշադրությամբ հետեւել տարածաշրջանային զարգացումներին եւ Իրանի դերին: Մարկ Ռյուտեն Իրանը, Չինաստանի եւ Դյուսիսային Կորեայի հետ միասին բնութագրեց որպես Ռուսաստանի հիմնական աջակիցներից, իսկ Թրամփի վարչակազմի դիրքորոշումը ցույց տվեց, որ Իրանի հարցը շարունակում է ազդել նաեւ ԱՄՆ-ի ներսում քաղաքական քննարկումների եւ ԱՄՆ-Եվրոպա հարաբերությունների վրա:

Եթե ճանաչումը «ֆաղափական թասրոն չէ», ապա Բնեսեթը որեւէ ճանաչում չի ենթարկվի

⇒1 Զուհիսի 30-ին ավստրիական «Դեր Շտանդարտում» մեկնաբանություն է գրել **Գուդրուն Հարրերը** (Gudrun Harrer): «Ինչո՞ւ Հայաստանում չեն տոնում, երբ Իսրայելը ճանաչում է Հայոց ցեղասպանությունը»: «Իսրայելի զենքի մատակարարումներն օգնեցին Ադրբեջանին վերագրավել ԼՂ-ը: Հայ-իսրայելական հարաբերությունները լավ չեն: Բաքուն՝ նավթ, Երուսաղեմը՝ զենք է մատակարարում: Սա հանգեցրեց Ադրբեջանի ռազմական գերազանցության եւ թույլ տվեց 2023-ին վերատիրել ԼՂ հայկական անկյալը: Ադրբեջանն Իսրայելին հետաքրքրում է նաեւ որպես Իրանի հարեւան, ընդունելի ռեալպոլիտիկ է, Թրամփի դարաշրջանում գործարքային: Չնայած իսրայելաթուրքական հարաբերությունները ցածրագույն մակարդակում են, Թրամփը մտադիր է Անկարայում հաջորդ շաբաթ ներկա լինել ԱՄՆ-ի զազաթնաժողովին՝ «նվերների փաթեթով» (նկատի ունի F 35-ը-ԱՄ. Բ.): Հենց Երրորդանի, որ Իսրայելին մեղադրում է ցեղասպանության մեջ, նացիստների հետ համեմատում: Եւ... Իսրայելը ներում է նույնիսկ այն, որ Հայաստանը 2024-ին Պաղեստինը ճանաչեց»:

Գերմանիայում հրատարակվող թուրքական nex24.news-ը հուլիսի 1-ին վերնագրում է՝ «Փաշինյանը դատապարտում է Իսրայելի ցեղասպանության որոշումը», իսկ ենթավերնագրում մեկնաբանում՝ «գարնանալի շրջադարձ՝ Հայաստանի վարչապետ Փաշինյանը քննադատում է Իսրայելի ճանաչումը՝ այն քաղաքական զենք համարելով:(Փաշինյանը հունիսի 29-ին ճեպագրույցում «Ազատության» թղթակցի հարցին ի պատասխան բառացի ասել է՝



Israelnetz ը հրատարակել է Victor Pietschmann-ի լուսանկարը՝ «Երգրումի հայերի գաղթը»

«Արձագանքի կարիք չենք տեսնում, որովհետեւ՝ կարծում ենք՝ Հայոց ցեղասպանության զենքայնացման թեմայի մեջ չմտնելը բխում է ՀՀ շահերից»- ԱՄ. Բ.):

«Հայաստանի կառավարության կիրակի օրվա լուրջությունից հետո երկուշաբթի ՀՀ վարչապետը լրագրողների համար անակնկալ հստակ ձեակերպեց՝ Երուսաղեմի որոշումը ողջունելու փոխարեն նա Իսրայելի նախաձեռնությունը մերժեց», գրում է վերոնշյալ կայքը:

Հոդվածին կից մի տեսանյութ է տեղադրված, որում ներկայացվում է Փաշինյանի շնորհակալական ուղերձը 2021-ին ԱՄՆ նախագահ Բայդենին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման առթիվ եւ ՀՀ կառավարության՝ արձագանքման տոնի փոփոխությունը պայմանավորում 2022-ից ի վեր Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու իրողությամբ:

«All Israel News»-ը հուլիսի 1-ին «Ինչո՞ւ ՀՀ կառավարությունը Իսրայելի Հայոց ցեղասպանության պաշտոնական

ճանաչումը չի նշում» վերնագրյալ ծավալուն մեկնաբանության մեջ փորձում է ընկալելի դարձնել ՀՀ վարչապետի ձեակերպումից հետո ԱԳՆ-ի արձագանքի բացակայությունը նաեւ: J. Micah Hancock-ի հեղինակած ծավալուն հոդվածի վերջաբանում այսպես է գրված. «Եթե Իսրայելը ուզում է համոզել Հայաստանին, թե ճանաչումը պարզապես քաղաքական թատրոն չէ, ապա նա պետք է հարցի հանդեպ նույն հարցանքը տա՞ծ, ինչը պահանջում է Հոլոքոսթի հիշատակի հանդեպ»:

Հոդվածագիրն իհարկե խիստ ուշադիր է եղել, տեղեկատվական հարթակներում հայերի սուր արձագանքները ներկայացրել է նաեւ իր ծավալուն հրապարակման մեջ: Հատկապես շեշտադրել է Հայ Դատի Կենտրոնական հանձնախմբի՝ «Ասպարեզ»-ում հրատարակված «զգուշավոր» հայտարարությունը, ինչպես գրում է մեկնաբանը՝ «ողջունելով Իսրայելի քայլը, բայց միեւնույն ժամանակ մեղադրելով նրան Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության

ընթացքում հայերի մահվան մեջ ներգրավվածության համար»: **Հենց** կտրուկ բացասական երկու կարծիք է առանձնացնում ԱԺ նախկին պատգամավոր **Միհրան Հակոբյանի** եւ **Սերժ Թանկյանի** գրառումները: «Ամբարոյական ցինիզմի զազաթնակետն է. 1915-ի Հայոց ցեղասպանությունը «ճանաչում է» ֆաշիստական մի պետություն, որ հիմնադրումից ի վեր Թուրքիայից հետո ամենակատիվն է եղել հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարում, անմիջականորեն ներգրավված Արցախում հայերի սպանության մեջ, իսկ ներկայումս ակնհայտ ցեղասպանություն է իրականացնում Գազայում», գրել է Հակոբյանը: «Նմանատիպ դիրքորոշում է հայտնել ԱՄՆ քաղաքացիություն ունեցող ներգաղթյալների ժառանգ SOAD-ի վոկալիստ Թանկյանը՝ Ինստագրամում հրապարակված հայիոյալից արձագանքով տեսանյութում, մեղադրել Իսրայելի կառավարությանը հայոց պատմությունը շահարկելու համար», գրում է հոդվածագիր:

ընթացքում Թանկյանի խոսքը՝ «Այն փաստը, որ Գազայում եւ Լիբանանում ցեղասպանություն իրականացնող այս կառավարությունն է որոշել ճանաչել իմ մեծ հայրերի եւ մայրերի հանդեպ ցեղասպանությունը, ամենավատ բանն է, որ կարող էին անել հայերիս հանդեպ՝ շահարկելով մեր պատմությունը, ցեղասպանությունը եւ մեր ցավը՝ իրենց քաղաքական շահի համար»: Հենց քոքը վերոհիշյալ կարծիքները զննահատում է «ցինիկ» եւ ներկայացնում է նաեւ «Ջերուսալեմ փոստ»-ին Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի ավագ պաշտոնյա **Կորյուն Եպիսկոպոս Բաղդասարյանի** խոսքից մի հատված՝ «Կառավարությունն այս քայլով իր բարոյական պարտականությունն է կատարել: Որպես Հոլոքոսթ վերապրած եւ անմիջապես դրանից հետո պետություն ստեղծած ազգի կառավարության բարոյական պարտքն էր Հայոց ցեղասպանությունը ճանաչելը»:

«All Israel News»-ի մեկնաբանը նշում է, որ «հայ քաղաքական գործիչներից շատերը Իսրայելի կառավարության ճանաչումը դիտարկում են իսրայելա-թուրքական հակամարտության խորապատկերում: Իսրայելի ճանաչումը նախորդեց Անկարայում ԱՄՆ-ի զազաթնաժողովին, որ Թուրքիային խոստանում էր ԱՄՆ-ի F-35-ի տրամադրում: Իսկ վերընտրված վարչապետ Փաշինյանը գլխավորում է մի շարժում, որը 1915-ի ցեղասպանության պահանջից հեռանալով՝ կենտրոնացնում է Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ խաղաղության եւ ինտեգրման վրա՝ այն դիտարկելով Եվրոպայի հետ հարաբերությունները խորացնելու ջանքերի մի մաս», գրում է Հենքոքը:

⇒1 Բայց, իհարկե, միայն իշխանության վարքը չէ այս անտրամաբանության համատեքստում ՍԴ այն որոշումից հետո, երբ ընտրությունների արդյունքների վերանայումը նպատակահարմար չհամարվեց: Մեր բոլորի արմանք-զարմանքն այդ առումով հավասարապես կարելի է տարածել ինչպես իշխանության, այնպես էլ ընդդիմության վրա, երբ հայտնի դարձավ, որ խորհրդարան անցած ընդդիմադիր ուժերը վերցնում են ԱԺ պատգամավորական մանդատները-զնամ խորհրդարան, իսկ իշխանությունն ամեն ինչ անելու է՝ լրացնելու սահմանադրական մեծամասնությունն ունենալուն պակասող երեք-չորս մանդատը: Ընդդիմությունն իր 41 մանդատով ասում է, թե բա՝ սկսվում է քաղաքական պայքարի նոր փուլը, Փաշինյանին իշխանությունից հեռացնելու գործընթացը նոր է սկսվում, ֆլան-ֆստան, խորհրդարանում եւ փողոցում ենք լինելու միաժամանակ: Ե, ընտրություններին այդ է որոշել այն հասարակ մարդը, որին դուք ինչ ասես չանվանեցիք՝ էլ անհայտեցիք, էլ զոմբի, էլ թրքահպատակ, էլ եսիմինչ, խորհրդարանում մանիպուլյացիաների հույսի՞նք եք: Իշխանությունն էլ հերթով մեղադրանքներ է առաջադրում ընդդիմադիր լիդերներին, հասան «Ուժեղ Հայաստանի» առաջին համար Նարեկ Կարապետյանին, Թեւանյանի կուսակից Արեգնազ Մանուկյանին:

Ինձ համար անձամբ տիպ է մայել օխլոսի համար նախանշված տեսարանները, խորհրդարանի մանդատների 41-64 հարաբերակցության դիմակայության ներուժի վրա կենտրոնացումը երկուսեք, որը սպառնում է ոչ միայն ընդդիմադիր եւ իշխանական, այլեւ ժողովրդի երկու մեծ հատվածների դիմակայության վերածվել, ընդ որում՝ դիմակայության թելերն անգամ ոչ թե մերոնց, այլ արտաքին խաղացողների ձեռքին են, որն ավելի դրամատիկ է դարձնում մեր ներքին կյանքի հնարավոր անկայունությունը, 41-ն ավելացնելու ընդդիմության, 64-ն ավելացնելու իշխանության ախորժակի պարագայում:

Որ ընդդիմությունը միշտ ավելի խոցելի է, եւ նրա առանձին անդամներ, հատկապես մանդատավորները կարող են տարբեր ճնշումների ենթարկվել եւ ճամբարափոխ լինել՝ իմ երկար կյանքի ընթացքում ես բազմիցս եմ տեսել, Ծառուկյանի հետ կատարվածն էլ մի անգամ արդեն եղել է անցյալում (տեսնես Ծառուկյանին երկրորդ անգամ նույն գետը մտնել հանոգող ընդդիմադիր լիդերը խղճի խայթ զգու՞մ է):

Այնպես որ՝ նոր խորհրդարանը, որի մոտավոր պատկերն ուրվագծում է ոչ ամենեւին ակնահաճո օրենսդիր մար-



մին, դառնալու է նոր տեսարանների, ինտրիգների եւ շուկների բեմադրության վայր՝ չկասկածեք: ՈւՅ-ի ցուցակից հարյուրիհինգ ինքնաբացարկն այս համատեքստում դիտարկեք, նրանց ասվել է՝ ով թույլ տեղ ունի՝ ինքնաբացարկվեք, նրանք այդպես էլ վարվել են:

Բայց ընդդիմության ցուցակներում մնացած շատ ու շատ պատգամավորացուների կենսագրությանն էլ մի թեթեւ որ մայում ես՝ ինքնին թույլ կետերի հավաքածու են, այնպես որ ավելի շուտ իշխանությունը մարդ կտանի ընդդիմությունից, քան հակառակը, ժամանակի հարց է:

Բայց ինձ բոլորովին այլ բան հանգիստ չի տալիս, որպես երկրորդ, ու ոչ թե այսուայն քաղաքական ուժով մտահոգ մեկի:

Ուրեմն մայեք, թե ի՞նչ է տեղի ունեցել: Ընդդիմությունն ասում է, որ իշխանությունը վարչական ռեսուրս է օգտագործել, կեղծել է ընտրությունները, իշխանությունն էլ ասում է, թե ընդդիմության քվեների մեծ մասը ընտրակաշառքի արդյունք է: Լո՞ւրջ: Այս ի՞նչ եք ասում, այսինքն երկու կողմը էլ, այդպիսով, հայտարարում եք, որ Հայաստանի կառավարման թիվ մեկ կառույց-օրենսդիր մարմինը լեգիտիմ չէ: Հասկանում ե՞ք, թե ինչ հարված եք հասցնում Հայաստանին, ինչ խոցելի դարձնում երկիրը, երբ նրա օրենսդիր մարմինը ոչ լեգիտիմ եք դարձնում այդպիսով: Այսինքն ի՞նչ, բոլոր այն օրենքները, որոնք առաջիկայում ընդունելու է այդ ոչ լեգիտիմ խորհրդարանը, վիճարկում եք, կամ վիճարկելու հիմք եք ստեղծո՞ւմ, մեր թշնամիներից էլ ո՞վ կարող է այդպիսի ուժգին հարված հասցնել Հայաստանին, քան

41-64-ի մոգությունը

իրար ձեռք-ձեռքի ընդդիմությունն ու իշխանությունը: Բա էլ ո՞ւր եք գնում այդ ոչ լեգիտիմ խորհրդարան, մանգատ վերցնում, պաշտոնների բաշխումից ու Դոմթի բանաձեւից խոսում, հը՞: ԿԸՀ-ն, փաստորեն, նույնը թողնելով ընտրությունների աղյուսները, անպատասխան է թողել խորհրդարանի ոչ լեգիտիմության երկկողմանի մեղադրանքը: Բա այդ ոչ լեգիտիմը ո՞նց է պետական նշանակության փաստաթղթեր վավերացնելու՝ խաղաղության համաձայնագիր, ԹՐԻՓՓ, սահմանազատման որոշումներ:

Դրել-Փագիկ Ծառուկյան եք գետին գցում, առյուծների ու խրտիվակների մասին առյուծ-գեյթս նկարում, օխլոսի ականջին հաճո տեքստեր արտաբերում, ինչո՞վ եք զբաղված, տեղյակ ե՞ք, որ ձեր կողքին պատերազմը վերսկսվել է, որ չնայած հավաստիացումներին՝ Իրանի դեսպանն առաջվա նման իր մտահոգությունն է փոխանցում ԹՐԻՓՓ-ի իրականացման ռիսկերից եւ մարտահրավերներից, իր երկրի սահմանին ԱՄՆ ներկայությունից, եւ համեմեքի հրաժեշտին մասնակցությունը դրանք չի չեզոքացնում, վտանգ որպես մեր հարավային սահմանին: Տեղյա՞կ եք, որ ձմռանը զագ կտրել կա-բան կա, ու ֆոն դեր Լայենը զագի հարց լուծող չի (եկատերինք բուրգում Փաշինյանի ռուսամերձ ջանքերն ասում են, որ տեղյակ եք):

Մինչդեռ մերոնք շատ հաճելի բաներից են խոսում՝ խորհրդարանական տորթի կտորներից, մանդատներից, անասնագողությունից, մարդագողությունից, թե բա՝ ԱԺ փոխնախագահի, ԱԺ երեք հանձնաժողովի նախագահի պաշտոններն ընդդիմությանն են, ում՝ ինչքան: Տո լավ, է:

Դե մերոնք միշտ են սիրել պաշտոնների մասին խոսակցությունը: Ներկա ԱԺ հանձնաժողովներից ինձ ԲՊ-ինն են, երեքը՝ մեծ ընդդիմությանը, վերջինս եթե բարի կամք դրսեւորի՝ մի պաշտոն կգցի փոքր ընդդիմությանը:

Թե բա՝ ԲՊ-ում պաշտոնների զգվւտոց է, խմբակցության ղեկավարի եւ քարտուղարի պաշտոնների համար իրար միս են ուտում մի քանի տղամարդ ու մի կին ատամնատեխնիկ: Ալեն Սիմոնյանին էլ հաջողությամբ ճամփեցին, ու ոչ մեկն անգամ օֆ չաբեց, դե հա, փորձառությունն ինչ է, որ հաշվի առնեն, թող նոր մարդիկ լիքը սխալներ թույլ տան, մինչեւ նոր պաշտոններն իրենց հագով դառնան, մեր նյարդերի հաշվին:

Մի հատ գլուխներդ բարձրացրեք, ձեր շուրջը մայեք, Կիւն ու Մոսկվան են զինակոծվում, ԱՄՆ-Իրան վերսկսված հակամարտությունը սպառնում է իր մեջ ներքաշել Թուրքիային, Իսրայելին, Ադրբեջանի՝ մեր հարավին նույնպես որպես մարտահրավեր, ԵԱՀԿ թուրք գլխավոր քարտուղարը մտմտում է մեզ կրոնափոխ անել: Իսկ դուք 41-64-ի մոգության տակ եք մնացել:

3.9.- Կառավարության միստից հետո Նիկոլ Փաշինյանի վերջին ճեպագրույցից երեւում է, որ նա, այնուամենայնիվ, հասկանում է նոր իրավիճակի լրջությունը եւ այս իմաստով միզուցե, վարչապետի պաշտոնում վերստին նշանակվելուց հետո, նպատակահարմար համարի կարգերի թարմացումը կառավարությունում: Համենայնդեպ՝ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի փոխարինման մտադրության չհերքումն այդ մասին է վկայում, ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանի հեռանալը եւս ուրվագծվում է: Եւ առհասարակ՝ նախարարների կաբինետը թարմացնելը նոր կառավարություններում ընտրություններից հետո ընդունված է: Միայն թե քաղաքական որոշումների համար միանձնյա պատասխանատվության մասին Փաշինյանի պատկերացումը եւս պետք է ուղարկել անցյալի գիրկը, նորմալ պետություններում ոչ թե անձը, այլ համակարգը, ինստիտուտն են պատասխանատու, ինստիտուցիոնալ պատասխանատվությամբ միայն հնարավոր է համակարգ եւ մոտեցումներ նորոգել: Քաղաքական որոշումները նպատակային եւ արդարություն հետապնդող են, եթե դրանց պատասխանատուն համակարգն է, ոչ թե անձը:

Անշարժը շարժելու սպասումի հույսով

Տարօրինակ թե յուրօրինակ միջավայրում ենք հայտնվել, որի պայմաններում անգամ չենք մոռանում ու զլանում հիշել ու վերհիշել մեր ինչ-որ ներուժի մասին: Մեղա մեղա, անգամ այս պայմաններում, երբ սեփական անվտանգային համակարգն ապահովելու ուղղությամբ գրեթե ոչինչ չենք ձեռնարկվում, անգամ երկրի գյուղատնտեսության համար պատասխանատու ՀՀ էկոնոմիկայի նախարարն է հայտարարում, որ երկրում հացահատիկ ցանելն է աննպատակահարմար, կառավարություն համարվող բարձրագույն գործադիր մարմինը ծաղիկ ու ելակ աճեցնողներին սուբսիդավորման,

նույնն է թե համաֆինանսավորման ծրագրերից է խոսում, սխալների յուրօրինակ մոտեքագրում է իրականացնում: Միայն պարզ չէ, ինչո՞ւ է կոնկրետ պատասխանատու պաշտոնյաների ստեղծած այս քաոսիկ վիճակի համար, ովքեր միլիոններով աշխատավարձեր ու վրան էլ պարգեւավճարներ են ստանում, պետք է վճարի մի կերպ գոյատևող շարքային հարկատուն, հատկապես նրա փոքր ու միջին գործարար հատվածը:

Տնտեսություն իր ուղղակի իմաստով ՀՀ-ում գրեթե չկա, քանզի մի քանի տոննա երշի-



կեղենն ու կաթնամթերքը, որ արտադրվում են մեզանում, հիմնականում արտեկրներից ներմուծված փոշիներից են ու խոր սառեցված մսատեսակներից: Հատկապես վեջիններիս վերաբերյալ կարծիքներ են հնչում, որ դրանք եվրոպական ռազմաբազաների ժամկետային սպառման սննդահումքեր են, մարդկանց խոսակցությամբ ասած դուրսգրման մթերքներ, որոնք աննշան գներով վաճառքի են հանվում: Նայեք ՀՀ առևտրային ցանցում դրանց գներին. 700-800 դրամ, երբ տեղական համարվողը նվազագույնը եռապատիկ

ԱՐԾՎԻ
ԲԱՆՉԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ՄՈՍԿՎԱ - Կարեն Սերգեյի Կոռնիենկոն (ծնվ. 1974, Աստրախան) ռուս դաշնակահար է, երաժշտական փոխադրումների հեղինակ: Ավարտել է Դնեպրոպետրովսկի երաժշտական դպրոցը: 15 տարեկանում տեղափոխվել է Մոսկվա՝ ուսանելու Մոսկվայի կոնսերվատորիային կից Ակադեմիական երաժշտական ուսումնարանում, տեսության եւ դաշնամուրի բաժնիներում: 1993-ին ընդունվել է Մոսկվայի կոնսերվատորիա, կատարողական վարպետությունը կատարելագործել եվգենի Սալինիի եւ Վերա Գոռնոստանայի ղեկավարությամբ: Սկրյաբինի անվան միջազգային առաջին եւ երկրորդ մրցույթների դափնեկիր է (1995, 2000), Ռախմանինովի անվան երկրորդ միջազգային մրցույթի գլխավոր մրցանակակիր (1997): Հանդես է եկել որպես Մոսկվայի պետական ակադեմիական ֆիլհարմոնիայի մենակատար եւ ակտիվ հյուրախաղերով շրջագայել տարբեր երկրներում:

Երաժշտի երկացանկում կարելուր տեղ են զբաղեցնում դասականների սիմֆոնիկ եւ օպերային ստեղծագործությունների իր իսկ դաշնամուրային փոխադրումները: Նրա հայտնի աշխատանքների շարքում են Չայկովսկու երաժշտության հիման վրա ստեղծված դաշնամուրային սյուիտները եւ այլ ինքնատիպ փոխադրումներ:

Կոռնիենկոյի մասին մանրամասն կարելի է կարդալ նրա պաշտոնական կայքում՝ <https://www.karenkornienko.ru:>

-Սիրելի՛ Կարեն, դուք հայտնի եք ոչ միայն որպես դաշնակահար, այլև որպես դաշնամուրային փոխադրումների հեղինակ: Ստեղծագործության վրա աշխատելիս ձեզ համար ո՞րն է առաջնային՝ բնագրին հավատարիմ մնալը, թե՞ նոր գեղարվեստական կերպարի ստեղծումը:

-Բնագիրն, իհարկե, ինձ համար առաջնային է: Մարդիկ պետք է ճանաչեն բնագրի երաժշտությունը, սակայն դա բոլորովին չի բացառում միանգամայն նոր բանի ստեղծումը: Երբ գրում էի իմ փոխադրումները, առաջին հերթին ցանկանում էի դաշնամուրային միջոցներով ստեղծել նվագախմբային հնչողության պատրանք, ինչպես նաեւ բացահայտել այդ երաժշտության մեջ այն, ինչ նվագախմբին հասու չէ: Խոսքը մախ եւ առաջ ազդեցիկայի (տեմպային արտահայտչական շեղումների) եւ երաժշտական նրբությունների մասին է: Նույնիսկ ամենալավ նվագախումբը շատ մեծ երաժշտական օրգանիզմ է, եւ որպեսզի այն անխափան գործի, հարկ է համակերպվել բազմաթիվ սահմանափակումների հետ, որոնք հաճախ չեն կարող հաղ-



թախարել նույնիսկ մեծագույն դիրիժորները: Իսկ ռոյալի առջեւ դու միաժամանակ թե՛ դիրիժոր ես, թե՛ նվագախումբ:

Մի օրինակ բերեմ: Ես բազմիցս նվագել եմ Ռախմանինովի կոնցերտները նվագախմբերի հետ: Երկրորդ կոնցերտը սկսում եմ բավական զուսպ տեմպով, սակայն շուտով զգալիորեն արագացնում եմ ընթացքը: Մի քանի անգամ եղել է, որ փորձերի ընթացքում մանրամասն մշակել ենք այդ արագացումը, սակայն համերգի ժամանակ հյուրախաղերով ժամանած դիրիժորը չի կարողացել «շարժել» նվագախմբին, եւ նրանք առաջին մասի գլխավոր թեման շարունակել են նվագել նույն սկզբնական տեմպով:

Մյուս կողմից, նշենք, օրինակ, Չայկովսկու «Ծաղիկների վալսը»: Նրա հիմնական թեման բազմիցս կրկնվում է: Նվագախմբում դա հիմնալի է հնչում, սակայն դաշնամուրով նույն թեման տաս անգամ միանման նվագելն ուղղակի անհնար է. բոլորը կմեռնեն ծանձրությից: Ուստի թեմայի յուրաքանչյուր նոր հնչեցում վերածվում է նոր տարբերակի: Չայկովսկու շքեղ բալետային վալսերի իմ մշակումներում շատ է նաեւ իմ սեփական երաժշտությունը, սակայն ես փորձել եմ գրել այնպես, որ չառաջանան անհամատեղելիություն եւ էլեկտիկա: Լսողը պետք է լսի հենց Չայկովսկուն եւ հենց «Ծաղիկների վալսը», այլ ոչ թե ինչ-որ այլ, անհասկանալի մի բան:

-Երբեւէ փոխել՞ եք որեւէ ստեղծագործության ձեր մեկնաբանությունը կենսափորձի ազդեցությամբ: Կարո՞ղ եք օրինակ բերել:

-Կասեի, որ կենսափորձի եւ, առավել եւս, իմ կրոնական համոզմունքների ազդեցությամբ ես հրաժարվել եմ կատարել որոշ ստեղծագործություններ, որոնք նախկինում հաճախ էին հնչում իմ համերգային ծրագրերում: Օրինակ՝ Ֆերենց Լիստի «Մեֆիստո վալսը»: Ես նույնիսկ այդ հրաշալի ստեղծագործության իմ մշակումն էի կատարել՝ միավորելով դաշնամուրային եւ նվագախմբային տարբերակները: Սակայն այժմ, երբ իմ կյանքում առաջին տեղում Տեր Աստվածն է, սատանայի նկատմամբ չափազանց մեծ ուշադրությունը հակասում է

Կարեն Կոռնիենկո.

Երաժշտության, գեղեցկության եւ հայ ծագման մասին

իմ համոզմունքներին, որոնք հիմնված են ուղղափառ հավատքի սկզբունքների վրա: Ես ձգտում եմ իմ համերգային ծրագրերում ընդգրկել միայն այնպիսի երաժշտություն, որն օգտակար է հոգու համար: Շատերը կարծում են, թե դասական երաժշտության ցանկացած ստեղծագործություն գեղեցիկ է, սակայն ես այդպես չեմ կարծում: Ինձ համար գեղեցիկ է այն երաժշտությունը, որտեղ չկա հոգեւոր խեղաթուրում, երբ չարը գրեթե առաքինության աստիճանի է բարձրացվում եւ տեղի է ունենում չարի հանդեպ հիացում, ինչպես, օրինակ, Ռիխարդ Վագների կամ Ալեքսանդր Սկրյաբինի երաժշտության մեջ:

Ի դեպ, երիտասարդ տարիներին ես մեծապես տարված էի Սկրյաբինի ստեղծագործությամբ, սակայն այսօր իմ երկացանկում հիմնականում պահպանել եմ նրա վաղ շրջանի գործերը, որոնք գրվել են նախքան, իմ համոզմամբ, նրա վերջնական հոգեւոր ընտրությունը:

Ուրիշ է Լյուդվիգ վան Բեթհովենը: Ինձ համար նա նման է աստվածաշնչյան Հակոբին, որը պայքարում էր Աստծո հետ: Կյանքի կեսը պայքարեց, բայց հետո, խլության կատարյալ լռության մեջ, տեսավ Աստվածային Լույսը, որն առկա է նրա ուշ շրջանի սոնատներում: Նրա ստեղծագործության մեջ ամեն ինչ անկեղծ է եւ ճշմարիտ: Նրա երաժշտության մեջ կեղծավորություն չկա:

Երբ գրում էի իմ «Սյուիտ-Ֆանտազիան»՝ Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայի երաժշտության հիման վրա, հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ իմ հոգեւոր կայացումը, երբ ընտրեցի Աստծո հետ՝ ուղղափառ հավատքի ճանապարհը: Այդ սյուիտը գրել եմ հինգ տարի: Նրա մտահղացումը փոխվում էր այնպես, ինչպես փոխվում էի ես ինքս:

-Այս համերգաշրջանում Մոսկվայի երաժշտության տանը դուք ներկայացրել եք «Գեղեցկության մարմնավորումը» խորագրով ծրագիրը: Ի՞նչ է գեղեցկությունը ձեզ համար:

-Գեղեցկությունն Աստծո ստեղծած աշխարհի հրաշալի հատկություններից մեկն է, որը մեզ մղում է հիանալու,

հուզվելու, ուրախանալու եւ փառաբանելու Աստծուն: Մարդը նույնպես կարող է գեղեցկություն ստեղծել, բայց միայն Աստծո հետ համաստեղծագործության մեջ: Իրականում գեղեցկությունը մարդու միջոցով ստեղծում է հենց Աստված, քանի որ մարդու մեջ կա Աստծո պատկերը: Մարդը գեղեցկությունը ճանաչում է հենց այդ աստվածային պատկերի միջոցով եւ դրա շնորհիվ հաղորդակցվում է Աստծո Հոգուն՝ թեկուզ ժամանակավորապես վերականգնելով կորցրած կապը Նրա հետ:

Հենց այդ պատճառով էլ Ֆյոդոր Դոստոևսկին գրել է. «Գեղեցկությունը կիրկի աշխարհը»:

Ցավոք, հատկապես մեր օրերում գեղեցկություն հասկացությունը խեղաթուրվում է մարդկային կրքերով, որոնք ավելի ու ավելի խրախուսում է մարդկային ցեղի թշնամին՝ սատանան: Այդ ժամանակ էլ ի հայտ է գալիս գեղեցկության հակապատկերը՝ տգեղությունը: Այն ծնվում է, երբ մարդը, Աստծո հետ կապվելու փոխարեն, հարում է սատանային, որը նախանձի պատճառով գեղեցիկ հրեշտակից վերածվեց զազրելի էակի:

Ստեղծելով տգեղ գործեր՝ մարդն, ըստ էության, երկրպագում է սատանային, որը տենչում է հենց այդպիսի երկրպագություն:

Մարդկանց փորձում են հանդգել, թե տգեղությունը գեղեցկություն է: Մեզ մշտապես մատուցում են կեղծիքներ՝ երաժշտություն, որը հնարավոր չէ լսել, նկարներ, որոնք հնարավոր չէ դիտել, սարսափելի բանդակներ, շենքեր, հագուստ եւ այլն: Սատանան ցանկանում է, որ մենք խեղդվենք այդ տգեղության մեջ, սակայն նրան դա չի հաջողվի, որովհետեւ ճշմարիտ գեղեցկության ձգտումը հնարավոր չէ ամբողջությամբ արմատախիլ անել: Յուրաքանչյուր մարդու մեջ ի սկզբանե դրված է Աստծո պատկերը, եւ այդ, գեղեցկությունը կփրկի աշխարհը:

-Այնժամ, երբ զգում եք, որ ձեր կատարումն իսկապես անդրիմացական (տրանսցենդենտ) է, ժամանակի զգացողությունը վերանդն է ձեզ համար:

-Հետաքրքրական հարց է: Իսկ երբեւէ ունեցել՞ եմ իսկապես անդրիմացական կատարումներ... Ես չպիտի դատեմ: Երբեմն մայում ես դաշնակահարին. աչքերը դեպի երկինք է բարձրացնում, գեղեցիկ շարժումներ է անում, իսկ ինքն այդ ընթացքում հանգիստ հաշվում է նոտաների տեղությունները, եւ ամեն ինչ նախապես մտածված ու հաշվարկված է: Մեծ է այս գաղտնիքը...

Ժամանակը շատ հարաբերական բան է: Լավ կլինի, որ համերգի ընթացքում այն աննկատ անցնի ունկնդրի համար, սակայն դա կախված է

այն էներգիայից, որ կատարողը փոխանցում է մարդկանց: Յուրաքանչյուր երաժշտություն իր ժամանակն ունի, եւ այն պետք է զգալ ավելի շուտ, քան դուրս գալ նրանից ու մոռանալ վերադարձը:

Ինչ վերաբերում է երաժշտության եւ ընդհանրապես արվեստի անդրիմացական կողմին, ապա դա չափազանց կարեւոր թեմա է: Երբ երաժիշտը մտնում է անդրիմացականի ոլորտ, նա հասկանում է, որ իր երաժշտության մեջ ներգրավվում են որոշ ուժեր, որոնք «այս աշխարհից չեն»: Տեղի են ունենում անբացատրելի բաներ: «Ես ինչպե՞ս այդպես նվագեցի, ինչպե՞ս եղավ»՝ հարցնում է նա ինքն իրեն:

Եվ հենց այստեղ, իմ կարծիքով, ստեղծագործող մարդուն սպասում է ամենամեծ վտանգը: Այդ պահին նա ընտրություն է կատարում՝ կամ ամեն ինչ վերագրել իր մեծ ու հրաշալի անձին, կամ՝ գաղտնի շնորհակալություն հայտնել Աստծուն այդ փորձառության համար: Կամ էլ, եթե դա Աստծուց չէ (ինչը նույնպես միանգամայն հնարավոր է), խնդրել ազատել իրեն դրանից, որպեսզի չվնասի իր հոգուն:

Առաջին ճանապարհը տանում է դեպի հպարտություն, երկրորդը՝ դեպի խոնարհություն:

Ավետարանում կա մի միտք, որը շատ արդիական է ստեղծագործ մարդկանց համար. «Ի՞նչ օգուտ, եթե մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կյանքը կորցնի»:

Առաջին ճանապարհն ընտրելով՝ մարդը կարող է հասնել այնպիսի մոլորության, ինչպիսին կյանքի վերջում ունեցավ Ալեքսանդր Սկրյաբինը, երբ կարծում էր, թե իր «Միստերիան» գրելով եւ այն Հնդկաստանում կատարելով՝ կկարողանա փոխել ամբողջ մարդկությունը: Սակայն, դժբախտաբար, նա մահացավ քթի վրա առաջացած փոքր թարախապալարի հետեւանքով...

Իսկ երկրորդ ճանապարհն ընտրողը շնորհակալություն է հայտնում Աստծուն ամեն լավ բանի համար եւ մեղադրում է իրեն այն ամենի համար, ինչ սխալ է արել: Այդ ժամանակ նրա հոգում խաղաղություն եւ ուրախություն է հաստատվում, եւ ոչ ոք ու ոչինչ չի կարող խել դրանք:

-Ձեր անունն ու արտաքինը հուշում են հայկական արմատների մասին: Կպատմե՞ք դրանց մասին:


-Մայրական պապիկս՝ Իգիթովը (նախապես՝ Իգիթյան), Աստրախանի հայերից էր, երկու տատիկներս ռուսներ էին, իսկ մյուս պապիկս՝ ուկրաինացի: Չնայած իմ արյան միայն մեկ քառորդն է հայկական, մանկության տարիներին մեր ընտանիքում առանձնահատուկ վերաբերմունք կար ամենայն հայկականի նկատմամբ:

ԱՐԾՎԻ ԲԱՆԶԻՆՅԱՆ

Ֆրանսիական գրական շրջանակներում վերջերս ջերմ ընդունելության է արժանացել **Մարինա Յալոյանի** «Երեւանի փոքրիկ դաշնակահարուհին» վեպը։ Սա հեղինակի առաջին գիրքն է, որտեղ ընտանեկան պատմության եւ մի ամբողջ դարաշրջանի հուզիչ համայնապատկերի համադրությամբ մանկան աչքերով պատմվում է ինքնագիտակցության արթնացման մասին, երբ երաժշտությունն ու երեւակայությունը դառնում են միակ ապաստանը փլուզվող աշխարհի դեմ հանդիման։

Կոմունիստ մտավորականների ընտանիքում ծնված դաշնակահարուհի հրաշամանուկ Վերոնիկայի մանկությունն անցնում է գրքերի, գաղափարական անասան համոզմունքների եւ երաժշտության աշխարհում, որը նրա առջեւ բացում է բոլորովին այլ հորիզոններ։ Սակայն 1991 թվականին, երբ խորհրդային Միությունը սկսում է փլուզվել, Վերոնիկայի ապահով աշխարհը ճաքեր է տալիս, եւ աղջիկը փորձում է հաղթահարել գորբաշուկյան վերակառուցման տարիների հայ իրականության դաժան առօրյան։ Պատմությունը ներխուժում է

«Երեւանի փոքրիկ դաշնակահարուհին»




յուրաքանչյուր ընտանիքի կյանք։ Երկիրը կանգնած է սովի եզրին։ Մարդիկ, տաքանալու համար, այրում են գրքերը։ Փողոցներում բռնկվում են բուռն ցույցեր։ Թաքնված պատերազմները դառ-

նում են փլուզվող խորհրդային համակարգի անխուսափելի հետեւանքները։ Սննդամթերքի եւ կենսական անհրաժեշտության ապրանքների սուր պակասը, սաստիկ ցուրտը, քաղաքական լարվածությունը եւ հասարակության կտրուկ վերափոխումները ձեւավորում են Վերոնիկայի կյանքի ու հասունացման պատմությունը։ Այս ամենի մեջ աղջիկը կառչում է մի փխրուն հույսից. հաջողությամբ հանձնել ընդունելության մրցույթը եւ ընդունվել Մոսկվայի հեղինակավոր երաժշտական դպրոցներից մեկը։

Ֆրանսիայում բնակվող Մարինա Յալոյանը մեծացել է մի քանի մշակութային աշխարհների խաչմերուկում՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների ազդեցության ներքո։ Մագիստրոսի աստիճան է ստացել հեռուստառադիո-հաղորդումների լրագրության մասնագիտությամբ՝ Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում։ Ֆրանսիայում աշխատել է «Խորհրդարանական ամսագիր» անգլերեն-ֆրանսերեն հանդեսի խմբագրությունում, Եվրոպայի խորհրդում, Փարիզի HEC բիզնես դպրոցում եւ IESEG մենեջմենթի դպրոցում։

Ա. Բ.

Կորյուն Բաղդասարյանի գիրքը՝ ռուսերեն



Կորյուն Բաղդասարյանի «Քուլ-գիր» արձակ ժողովածուին «Ազգ» անդրադարձ արել է։ Գրքի պատմվածքները եւ մի անտիպ վիպակ ռուսերենով «ПЕЧАТЬ СУДЬБЫ» վերնագրով Մասկվայում հրատարակել է ռուսական շատ հեղինակավոր հրատարակչություններից մեկը՝ «Խուդոժեստվեննայա լիտերատուրան», այդպիսով ռուսալեզու ընթերցողին հնարավորություն տալով հաղորդակցվելու ամբողջովին հայկականությանը մերժված, մարդկային ամենատարբեր կերպարներ մատուցող հայ հեղինակի խորքային արձակի հետ։ Կորյուն Բաղդասարյանի արձակի առանձնահատկությունը հանդարտ եւ ներհայեցողական ոճն է, նա հոգին քրքրող քննախույզ հայացքով եւ վարպետ գրչով բացում է մարդու ամենախորքերում թաքնված զգացումները՝ կյանքի հնարավոր եւ անսպասելի դիպաշարերում, ընթերցողին աննկատ տանելով իր հերոսների հետեւից այն աստիճան, որ նրանց հետ վերապրի սիրո, հիասթափության, վայրկյանների ողջ ներկայանկը՝ կյանք անունով։

«Ցավոք՝ բնությունն ինձ նկարչի տաղանդ չի պարգևել, որ դիմանկարներ անեմ ու ցույց տամ մարդկանց հոգեվիճակը տարբեր իրավիճակներում։ Այդ բացը ես փորձել եմ լրացնել գրչով։ Եւ եթե դու, իմ թանկագին ընթերցող, համակարծ կարողանաս տեսնել իմ հերոսին եւ զգալ նրա հոգում կատարվողը, ես անսահման ուրախություն եւ բավարարվածություն կապրեմ», գրել է գրքի շապիկին նրա հեղինակը։

Գրքի թարգմանիչը **Մարիկա Մելքունյանն** է, այն առկա է նաեւ Հայաստանի գրախանութներում եւ կարող է լավ նվեր լինել ռուսալեզու ընթերցողի համար։

Մ. Խ.

Կարեն Կոռնիենկո. Երաժշտության, գեղեցկության եւ հայ ծագման մասին

⇒4 Պապիկս խոսում էր հայոց լեզվով, հայրս նույնպես որոշ չափով գիտեր հայերեն։ Նա հատուկ սովորել էր լեզուն, որպեսզի մեկնի Հայաստան եւ այստեղ հայերեն գրուցի մարդկանց հետ։ Ծնողներս միշտ մեծ ջերմությամբ էին հիշում Հայաստան կատարած իրենց ուղեւորությունը։

Պատմեմ մի մանկական դրվագ։ Ծնողներիս հետ խաղում էինք «Տնակը» հեքիաթի խաղը։ Հիշո՞ւմ եք. «Ես ծվծվան մուկիկն եմ, ես կռկռան գորտիկն եմ, իսկ դո՞ւ ով ես»։ Երբ հերթը հասավ ինձ, առանց վարանելու պատասխանեցի. «Ես հայ եմ»։ Ահա այդպես (*ծիծաղում է*)։

Երբ տասնվեց տարեկանում, արդեն Մոսկվայում սովորելիս, ստացա անձնագիրս, «ազգություն» տողում (խորհրդային տարիներին նման տող կար) գրեցի՝ «հայ»։

Ի դեպ, իմ ուսուցչուհին կոմսերվատորիային կից ուսումնարանում **Գալինա Նիկոլաեւնա Եդիագարովան**, հարյուր տոկոսանոց հայ էր։ Նա ծնվել եւ մեծացել է Բաքվում, այժմ ապրում է Իսպանիայում։

-Որքա՞ն եք ծանոթ հայ երաժշտությանը։ Առիթ ունեցե՞լ եք կատարել հայ կոմպոզիտորների դաշնամու-

րային ստեղծագործություններ։

-Երիտասարդ տարիներին շատ էի սիրում Արամ Խաչատրյանի Դաշնամուրի կոնցերտը։ Սովորել էի այն, բայց, ցավոք, երբեք չեմ կատարել բեմում։ Շատ էի ցանկանում կատարել նրա «Սպարտակ» բալետի «Աղաջողի» դաշնամուրային մշակումը, սակայն այդ մտահղացումը դեռեւս չի իրականացել։ Կանեմ, եթե Աստված կամենա։ Գուցե նույնիսկ ամբողջական սյուիտ ստեղծվի «Սպարտակի» երաժշտության հիման վրա։

Շատ գեղեցիկ կարելի է մշակել նաեւ Առնո Բաբաջանյանի հայտնի «Նոկտյուրնը»։ Ես արդեն այն լսում եմ իմ ապագա փոխադրմամբ։

Ի դեպ, հիշեցի, որ 1989 թվականի գարնանը, երբ սովորում էի Դնեպրոպետրովսկի երաժշտական ուսումնարանի առաջին կուրսում, ծնողներս ինձ բերեցին Մոսկվա՝ խորհրդատվությունների։ Այդ ժամանակ շատ էի ստեղծագործում եւ իմ ապագան պատկերացում էի որպես կոմպոզիտոր։ Մեզ բախտ վիճակվեց հանդիպել Կարեն Խաչատրյանին՝ Արամ Խաչատրյանի որդուն եւ իմ անվանակցին։ Նա ծնողներիս ասաց. «Եթե ցանկանում եք, որ ձեր տղայից բան դուրս գա, Դնեպրոպետրովսկից տեղափոխեք Մոսկվա՝

կոմսերվատորիային կից ուսումնարան»։ Իսկ ինձ ասաց. «Ջարգացրո՛ւ դաշնամուրային վարպետությունը։ Դու դաշնակահար կդառնաս, հիանալի տվյալներ ունես»։

Նրա խոսքերը մարգարեական դարձան։ Մենք լսեցինք Կարեն Արամովիչի խորհուրդը։ Ինձ ընդունեցին Մերգլյակովյան ուսումնարանի տեսության բաժնի երկրորդ կուրս։ Սակայն Մոսկվայում ստեղծագործել դադարեցի։ Տեսաբան դառնալ չէի ցանկանում, ուստի երրորդ կուրսում միաժամանակ սովորում էի թե՛ տեսության, թե՛ դաշնամուրի բաժնեներում եւ ավարտեցի որպես դաշնակահար։

Իմ կոմպոզիտորական ձգտումները վերածվեցին դաշնամուրային փոխադրումների ստեղծման։ Երաժշտություն գրելուն վերադարձա արդեն հասուն տարիքում։ Սկզբում փոխադրումների հետ մեկտեղ գրում էի վարիացիաներ հայտնի թեմաներով, իսկ ավելի ուշ՝ սեփական դաշնամուրային պիեսներ եւ հոգեւոր երգեցողություններ եկեղեցական արարողությունների համար։

-Շնորհակալություն գրույցի համար, սիրելի՛ Կարեն։ Հուսով եմ՝ շուտով ձեզ տեսնել երեւանյան բեմում։

-Շատ ուրախ կլինեմ, եթե նման հրավեր ստանամ։



Պետերբուրգաբնակ գեղանկարիչ, գծանկարիչ, տիկնիկագործ եւ խեցեգործ **Էլինա Գրիգորյանի** ինքնատիպ գեղարվեստական աշխարհում միափյունվել են հեքիաթային պատկերացումները, քրիստոնեական խորհրդաբանությունն ու արեւելյան գունային ավանդույթները։

Ծնվել է 1964 թվականին, Բաքվում։ Մանկությունից շրջապատող արեւելյան գարդանախշերի հարստությունն ու ժողովրդական արվեստի գունային մշակույթը ձեւավորել են նրա գեղագիտական ճաշակն ու ապագա ստեղծագործական մտածողությունը։ 1986-ին Էլինան ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի գեղարվեստա-գծանկարչական բաժինը։ 1988 թվականին հաստատվել է Ռուսաստանում, որտեղ դասավանդել է եւ շարու-

նակել ստեղծագործական գործունեությունը։

Էլինա Գրիգորյանի արվեստը ճանաչելի է իր վառ անհատականությամբ եւ ինքնուրույն պատկերային լեզվով։ Նրա նկարներում գերիշխում է հագեցած, դեկորատիվ գունաշարը, որի միջոցով ծնվում է իրականության եւ երեւակայության սահմանները հատող բանաստեղծական աշխարհ։ Հարավային խառնվածքը, կենսասիրությունն ու լույսի զգացողությունը նրա արվեստին հաղորդում են առանձնահատուկ ջերմություն եւ անմիջականություն։ Առաջին հայացքից Էլինայի նկարները կարող են թվալ պարզ ու մանկական անմիջականությամբ կատարված, սակայն այդ պարզության ներքո բացահայտվում են փիլիսոփայական շերտեր, կերպարների ներքին

ներդաշնակությունն ու գունային մտածված կառուցվածք։

Էլինա Գրիգորյանի ստեղծագործության կարեւոր ուղղություններից են աստվածաշնչյան թեմաները, որոնց նա մոտենում է ոչ թե որպես ավանդական պատկերագրության վերարտադրության, այլ՝ որպես անձնական հոգեւոր փորձառության արտահայտության։

Նկարչուհին եղել է Ռուսաստանի եւ արտերկրի բազմաթիվ ցուցահանդեսների մասնակից։ Ստեղծագործությունները պահպանվում են թանգարաններում եւ տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում։

Էլինա Գրիգորյանը անժամանակ կյանքից հեռացավ անցած հունիսի 29-ին թողնելով գունեղ, լուսավոր եւ խորապես մարդասիրական արվեստի հարուստ ժառանգություն։

Ա. Բ.

Հայ դարձողները մոսկովյան բալետի մրցույթում

1969 թվականից ի վեր Մոսկվայի Մեծ թատրոնում անցկացվում է Միջազգային բալետի մրցույթը, որը համարվում է աշխարհի ամենահեղինակավոր բալետային մրցույթներից մեկը։ Այս տարի հունիսի 25-ից հուլիսի 5-ը կայացել է 15-րդ մրցույթը՝ նվիրված ռուս մեծանուն պարողի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ **Յուրի Գրիգորովիչին**։ Այս տարի փառատոնը ստացել է 362 հայտ 35 երկրների մասնակիցներից։ Մրցույթում Հայաստանը ներկայացրել են բալետի մենակատարներ **Տիգրան Ավագյանը** և **Ռազմիկ Մարուքյանը**։ Վերջինս «Տղամարդիկ, մենապար» անվանակարգում արժանացել է երրորդ մրցանակին (բրոնզե մեդալ)։ Եվ եթե Տիգրանի համար սա առաջին ելույթն էր նման բարձր մակարդակի հեղինակավոր մրցույթում, ինչն ինքնին հաջողություն է, Ռազմիկ Մարուքյանը նախկինում արդեն մասնակցել էր մրցույթների և արժանացել մրցանակների։ 2017-ին Բրյուսելում կայացած «Արաբեսկ» միջազգային մրցույթում գրավել է առաջին տեղը՝



արժանացել «Ամենից արտիստիկը» հատուկ մրցանակին, իսկ 2024 թվականին Պերմում կայացած Եկատերինա Մաքսիմովայի անվան «Արաբեսկ» ռուսական բալետի մրցույթում ճանաչվել է լավագույնը՝ արժանանալով առաջին մրցանակի։

Ռազմիկ Մարուքյանի հետ մեր հարցազրույցը տես **«Ազգ»**, 2026, փետրվարի 13։

Ա. Բ.

Ֆելիքս Բախչինյան. Հայաստանը Ֆրիտյոֆ Նանսենի հետ կամրջողը



Երջանկահիշատակ գրող, գրականագետ, թարգմանիչ Ֆելիքս Բախչինյանը 60-ից ավել գրքերի և բազմաթիվ թարգմանությունների հեղինակ է։

Նա վախճանվել է 2024 թվականին, բայց, ինչպես «Ֆրիտյոֆ Նանսեն» ինստիտուտ-հիմնադրամի գործադիր տնօրեն Հայարփի Խաչատրյանն է նշում, նրա գրառումների տեսքը դեռ կա, որտեղ կետ առ կետ ծրագրել էր անելիքները։ Այդ գրառումներով էլ առաջնորդվում են ու Ֆելիքս Բախչինյանի նախագծերն իրականացնում։

Թեքեյան մշակութային միությունը կազմակերպել էր Ֆելիքս Բախչինյանի հիշատակի երեկո, որի ընթացքում ցուցադրվեց գրողի հետ ծավալուն հարցազրույց, գրականագետները ներկայացրին նրա գրական գործունեությունը, պատմեցին հուշեր։

Ֆելիքս Բախչինյանի շնորհիվ Հայաստանում շատերը խորությամբ ճանաչեցին նորվեգացի անվանի բեռնախույզ, հայ ազգի բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենին։

Հայարփի Խաչատրյանը պատմեց, որ անգամ նորվեգացիներն են զարմացել, թե ինչ առեղի աշխատանք է կատարել Ֆելիքս Բախչինյանը՝ բազմակողմանիորեն ուսումնասիրելով և ներկայացնելով բեռնախույզի գործունեության ոլորտները։

Բախչինյանի սցենարներով ֆիլմեր են նկարահանվել Նանսենի մասին։ Նա հիմնադրել է Նանսենի թանգարանը։


Օտար ազգերի գրականության ու մշակույթի թարգմանն է եղել Ֆելիքս Բախչինյանը՝ Հայաստանը կամրջելով աշխարհի տարբեր երկրների հետ։ Երիտասարդ տարիներին սովորել էր Վիլնյուսի պետական համալսարանում և ուսումնասիրել հայլիտվական գրական-մշակութային կապերը։

Ֆելիքս Բախչինյանը Հայաստանի Թեքեյան մշակութային միության անդամ էր, արժանացել է «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակի, ստացել պետական, հասարակական, գրական բազմաթիվ պարգևներ ու մեդալներ։



Բոհջալյանի 26-րդ վեպը՝ «Դիլետանտը»

Ուոթերթաունից Ամերիկայի հայկական թանգարանը տեղեկացնում է, որ օգոստոսի 11-ին տեղի է ունենալու ճանաչված վիպասան **Քրիս Բոհջալյանի** նոր, 26-րդ **«Դիլետանտը»** գրքի պաշտոնական շնորհանդեսը։ Այդ առթիվ թանգարանը ծրագրել է գրական երկխոսություն կազմակերպել ամերիկահայ երկու համբավավոր գրողների՝ **Նենսի Գրիգորյանի** և **Քրիս Բոհջալյանի** միջև։ Նրանք, ըստ տեղեկատվության, պատմության, գրականության և նորարարական գործընթացներին անդրադառնալով բացահայտելու են վիպագրության նորամուտը, հորիզոններ։ Քննարկումից հետո նախատեսված է հյուրասիրություն, որի ընթացքում նաեւ վաճառված հատորների ստորագրում հեղինակի կողմից։



«Դիլետանտը» (The Amateur) արդեն իսկ բարձր է գնահատվել գրաքննադատների կողմից։ «Նյու Յորք թայմսը» այն անվանել է «գիրք, որի մասին ամեն ոք խոսելու է 2026-ին», իսկ «Օպրա Ղեյլին»՝ «ամառային ընթերցանության համար նախատեսված լավագույն հատորը»։ «Publishers Weekly» շաբաթաթերթը՝ «գլուխգործոց» է որակել այն, իսկ «Kirkus Review» հանդեսը՝ «անդինադրելի և գերազանց»։

Իրադարձությունները գրքում, դարձյալ ըստ տեղեկատվության, ծավալվում են 1978-ին, երբ

պատանի, տաղանդավոր գոլֆ խաղացող Մայրայի կյանքում անդառնալի շրջադարձ է կատարվում ողբերգական վթարի հետեւանքով։ Պատմությունը զարգանում է հասունության հասնելու, հարմարվելու, ճկունություն դրսևորելու, դասակարգային պայքարի և թաքուն գաղտնիքների անորոշության պայմաններում, երբ ամեն ինչ անակնկալ վտանգ է կախված գլխավերելում։

Քրիս Բոհջալյանի նախորդ 25 գրքերը բոլորն էլ «Նյու Յորք Թայմսի» կողմից «N1 բեստսելլերներ» են ճանաչված եղել։ Դրանց թվում են «Ավազե ամրոցի աղջիկները» (The Sandcastle Girls), «Վիուկի ժամանակը» (Hour of the Witch) և «Էգ առյուծը» (The Lioness)։ Նրա գործերը թարգմանված են աշխարհի 30-ից ավելի լեզուներով։

Նենսի Գրիգորյանը նույնպես ճանաչված վիպասան է, հեղինակ «Զապել» (Zabelle), «Հացի և կրակի երազներ» (Dreams of Bread and Fire), «Այդ ամբողջ լույսը, որ կար» (All the Light There Was), «Աշխարհի բոցավառվող սիրտը» (The Burning Heart of the World) և այլ անգլիալեզու հատորների։

Դասավանդել է Կոլումբիա և այլ համալսարաններում։

«The Armenian Mirror-Spectator» շաբաթաթերթից թարգմանեց ՎԱՐՈՒԾ ԾՈՒՆԻՎՅԱՆԸ

Անշարժը շարժելու սպասումի հույսով

3 Նույն պատկերն է պանրի պարագայում. կաթի փոշուց պատրաստված արտադրանքը պիտակավորվում է որպես պանրային մթերք կամ կաթ պարունակող արտադրանք, որն առաջարկվում է մինչև 1500 դրամով, երբ հարեւանությամբ ցուցադրվող պանիր որակվողը կրկնակիից բարձր գնով է վաճառվում։ Պատճառը մի քանի տարի առաջվա 320 հազար կաթնատու կովերից հագիվ կեսն է մնացել, որոնց կաթնատվությունը ըստ ոլորտի պատասխանատուների միլիգրամներով են ավելացել։ Երեք միլիոն հայաստանաբնակների ու զբոսաշրջիկների տարեկան պահանջը բավարարելու համար նվազագույնը 1 մլն տոննա կաթ է անհրաժեշտ, երբ բուն արտադրությունը 300 հազար տոննա էլ չի կազմում։ Սսամթերթի պարագայում պահանջարկը մոտ 300 հազար տոննա է, երբ արտադրությունը 100 հա-

զար տոննայի էլ չի հասնում։ Երկիր մոլորակի տասնյակ երկրներում են, ասենք, հավի մսի արտադրությունը 1 բնակչի հաշվով տարեկան մինչև 50 կգ-ի հասցրել, երբ ՀՀ-ում այն 10 տոկոսն էլ չի հասնում։

Այս պայմաններում թե ինչքանով է արդարացված ՀՀ համեստագույն բյուջեի միջոցները դեպի ջերմոցների ու ինտենսիվ այգիների աճին ուղղել, մասնագիտական հաշվարկների է կարոտ։ Երկրի պարենային անվտանգության մակարդակը հուշում է, որ մասնագիտական ներուժն այս հարցում լուրջից լուրջագույն անելիք ունի հայաստանյան հանրության հանդեպ, քանզի որոշակի հիվանդությունների ակտիվացում է արձանագրվում։ Այստեղ էլ են գումարներ ուղղվում, երբ գերադասելի է նախագուշակյան միջավայրի ներդրումը։ Արձանագրվում է հանրահայտ իրավիճակ՝ ցանկանում են լավ բան անել, ստացվում է ինչպես միշտ։

Հենց օրերս տեսակապի միջոցով հենց հացահատիկի դաշտից ելույթ էր ունենում Սարգսյան ազգանվամբ ֆերմեր, որը ափին հավաքած ցորենով նշում էր, որ հեկտարից 12 տոննա բերք է ակնկալում, ոգելորված բացատրում էր, որ այս տարվա բերքի 1 հատիկը նախորդ տարիների 3 հատիկների քաշն ունի։

Հավատալ-չհավատալը ոմանց գործն է, ֆերմերի ոգելորությունը ուսումնասիրելը՝ մասնագետ պաշտոնյա-պատասխանատուների առաջնահերթ պարտականությունը։ Ավաղ, պարզվում է դյուրին խնդիր չէ Երեւանի հրապարակամերձ տարածքում գտնվող աշխատավայրից Արարատյան դաշտում գտնվող համայնք հասնելը. հարկավոր է գործողման հրաման ունենալ, տրանսպորտային ու սննդի հարցերը լուծել, որոնք այսօր պարզապես անլուծելի են, որոնց արդյունքում էլ պարզ հարցերը խնդիրների են վերածվում, նախարարական լուծումներ ենթադրում, որոնց համար

կուսակցական միջոցառումների ընթացքում ժամանակ է պահանջվում։ Ընդամենը մի քանի տարի առաջ համանման խնդիրների լուծումը դրված էր գյուղատնտեսության աջակցության մարզային կառույցների վրա, որոնք տարօրինակ ինչ-որ որոշումով լուծարվեցին. չկա պատասխանատուն՝ չկա խնդիրը...

Ահա այսպիսի կառավարում։ Հընթացս՝ հարց ՀՀ էլեկտրաէներգետիկ առումով հանրապետությունը ինքնաբավ ներկայացնող մեր ինքնավստահ պատասխանատուներին էլեկտրոմոբիլների 1 մլն քանակի պարագայում ինչ ծավալի էլեկտրաէներգիա է պահանջվում անխափան էլմատակարարում ապահովելու ուղղությամբ։ Համակարգը պատրաստ է թե պատրաստվում է լուծել այսօրինակ խնդիր, որը կենսական անհրաժեշտություն է՝ ՀՀ տնտեսության անխափան գործունեության ուղղությամբ։

Տրվե՞նք՝ անշարժը շարժելու սպասումի։

ԳԵՂԱՄ ԲՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ԳՈՐԱՐ ԲՈՏՈՅԱՆ

ՈՂ-ում «ԱՁԳ»-ի հասուկ թղթակից

Կան մարդիկ, որոնց անունը վաղուց արդեն դուրս է եկել իրենց մասնագիտության շրջանակներից: Նրանք դառնում են իրենց գործի խորհրդանիշը, իրենց երկրի մշակութային դեսպանը, իրենց ժողովրդի ստեղծագործ ոգու կրողը: Այդպիսի մարդկանցից է շեֆ-խոհարար **Յուրա Սարգսյանը**, մարդ՝ որի կյանքն ու աշխատանքը լավագույնն ապացույցն են, որ մեծ նվաճումների համար պարտադիր չէ ապրել աշխարհի խոշոր մայրաքաղաքներում: Երբեմն բավական է սիրել սեփական հողը, հավատալ սեփական ուժերին եւ երբեք չկորցնել վերադարձի ճանապարհը:

2026 թվականը Յուրա Սարգսյանի մասնագիտական կենսագրության մեջ նշանավորվեց եւս մեկ կարելու ձեռքբերումով: Հեղինակավոր WHERE TO EAT INTERNATIONAL 2026 միջազգային մրցանակաբաշխության շրջանակում նա ընդգրկվեց Հայաստանի «Տարվա շեֆ-խոհարար» անվանակարգի կարճ ցուցակում՝ հայտնվելով հանրապետության լավագույն վեց շեֆ-խոհարարների շարքում: Նույն տարում աշխարհի յոթ երկրների լավագույն ռեստորաններն ու խոհարարները ներկայացնող այս հեղինակավոր հարթակում իր արժանի տեղն ունեցավ նաեւ նրա ստեղծած «Tsaghkunk Chef House» նախագիծը: Այդ գնահատականը ոչ միայն անձնական հաջողություն էր, այլեւ միջազգային ճանաչում հայկական խոհարարական մշակույթի նկատմամբ, որի նվիրյալներից մեկը երկար տարիներ եղել է մնում է Յուրա Սարգսյանը:

WHERE TO EAT INTERNATIONAL-ը վաղուց արդեն պարզապես մրցանակաբաշխություն չէ: Այն միջազգային մասնագիտական հարթակ է, որտեղ հանդիպում են տարբեր երկրների գաստրոնոմիական մշակույթները, ձեւավորվում են ոլորտի զարգացման նոր ուղղություններն ու գնահատվում այն մարդիկ, ովքեր իրենց աշխատանքով փոխում են ժամանակակից խոհարարության պատկերացումը:

Յուրա Սարգսյանը ծնվել է 1979 թ. ապրիլի 3-ին Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղում: Հենց այստեղ էլ սկսվել է նրա կյանքի այն ճանապարհը, որն այսօր ճանաչելի է դարձել ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից շատ հեռու:

1996-2004 թթ. նա սովորել է տնտեսագիտական համալսարանում, իսկ ավելի ուշ՝ 2010-2011 թթ.-ին, մասնագիտական վերապատրաստումներ է անցել Մոսկվայում եւ Կիպրոսում խորացնելով խոհարարական գիտելիքներն ու ծանոթանալով միջազգային փորձին:

Սակայն Յուրայի իրական համալսարանը կյանքն էր: Նրա մասնագիտական ուղին սկսվել է դեռեւս 1998 թվականին: Առաջին քայլերը կատարել է որպես խոհարար, աշխատել տարբեր ռեստորաններում, տարիների ընթացքում ձեռք բերել փորձ, կատարելագործել վարպետությունն ու աստիճանաբար ձեւավորել սեփական ստեղծագործական ձեռագիրը: Նրա աշխատանքային կենսագրության մեջ իրենց տեղն ունեն «Արեւիկ», «Երգիր», «Արարատ Հոլ» ռեստորանները, այնուհետեւ՝ «Cascade Royal»-ը, «Alpine Castle»-ը, «Best Western Bohemian Resort»-ը եւ մի շարք հայտնի այլ հաստատություններ:

Տարիների ընթացքում նա ճանաչեց աշխարհի տարբեր խոհանոցներ, յուրացրեց նոր տեխնոլոգիաներ, աշխա-

Ծաղկունքից մինչեւ միջազգային հեղինակավոր հարթակներ

Յուրա Սարգսյան. նա հայկական խոհանոցը վերածեց ազգային այցեֆուրի



տեց միջազգային չափանիշներով, սակայն այդ ամբողջ ճանապարհին երբեք չկորցրեց ամենակարեւորը՝ հայկական խոհանոցի նկատմամբ ունեցած սերն ու պատասխանատվության զգացումը:

Շատերը, հասնելով մասնագիտական հաջողությունների, ձգտում են ավելի հեռու գնալ հայրենիքից: Յուրա Սարգսյանն ընտրեց հակառակ ճանապարհը: Նա վերադարձավ:

Վերադարձավ ոչ թե հանգստանալու, այլ ստեղծելու: Վերադարձավ այն համոզմամբ, որ որեւէ ճանաչում արժեք ունի միայն այն դեպքում, երբ կարողանում ես այն ծառայեցնել հայրենիքիդ:

Հենց այդ համոզմունքից էլ ծնվեց նրա ամենահամարձակ գաղափարը՝ ստեղծել մի վայր, որտեղ մարդիկ կզան ոչ միայն ճաշելու, այլեւ ճանաչելու Հայաստանը:

Շուտով այդ գաղափարը վերածվեց իրականության: Վերադառնալով հայրենի Ծաղկունք՝ Յուրա Սարգսյանը հիմնեց երկու հյուրատուն-ռեստորան, որոնք այսօր վաղուց արդեն հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Աշխարհի տարբեր երկրներից մարդիկ գալիս են այս փոքրիկ գյուղ՝ համոտեսելու նրա հեղինակային ուտեստները, զգալու հայկական տան ջերմությունն ու բացահայտելու այն Հայաստանը, որը չի տեղավորվում զբոսաշրջային ուղեցույցների էջերում:

Դրանցից մեկը Յուրան անվանել է «խոհարարի տուն»: Անվանումը պատահական չէ: Այն պարզապես հյուրա-

տուն կան ռեստորան չէ, այլ գաղափար, որն ունի իր հստակ առաքելությունը՝ պահպանել, զարգացնել եւ նոր շունչ հաղորդել հայկական խոհարարական ավանդույթներին:

«խոհարարի տունը» մեծ ընտանիքի ստեղծած տուն է: Որդին ձեւավորում ու նկարագարում է հյուրատան պատերը, մայրը պատրաստում է ավանդական հայկական պահածոներ, կինը ղեկավարում է հյուրատան աշխատանքը: Յուրաքանչյուրն իր ներդրումն ունի այդ տան մթնոլորտի ստեղծման գործում, եւ, թերեւս, հենց այդ պատճառով այստեղ հյուրը շատ արագ դադարում է իրեն պարզապես այցելու զգալուց:

Այսօր «Tsaghkunk Chef House» անունը վաղուց արդեն սովորական ռեստորան չի նշանակում: Այն դարձել է հայկական խոհարարական մշակույթի յուրօրինակ կենտրոն, որտեղ

ազգային խոհանոցը ներկայացվում է ոչ թե որպես անցյալի հիշողություն, այլ որպես կենդանի մշակույթ, որը շարունակում է զարգանալ, նոր գաղափարներ ծնել եւ արժանապատվորեն ներկայանալ աշխարհին:

Այստեղ յուրաքանչյուր ուտեստ պատմություն ունի, յուրաքանչյուր բաղադրատոմս՝ հիշողություն, յուրաքանչյուր այցելու՝ սպասված հյուր է:

Աշխարհի տարբեր երկրներից մարդիկ գալիս են Ծաղկունք ոչ միայն համոտեսելու Յուրա Սարգսյանի պատրաստած ուտեստները: Նրանք գալիս են զգալու հայկական տան մթնոլորտը, ծանոթանալու գյուղական կյանքի պարզությանը, հայկական հյուրընկալության մշակույթին եւ հասկանալու, թե ինչու է Հայաստանի մասին հաճախ սկսում խոսել հենց նրա խոհանոցը:

Պատահական չէ, որ «Tsaghkunk Chef House»-ը տարիների ընթացքում դարձել է նաեւ երիտասարդ խոհարարների կրթության յուրօրինակ կենտրոն: Այստեղ անցկացվում են մասնագիտական հանդիպումներ, վարպետաց դասեր, միջազգային շփումներ: Յուրա Սարգսյանը սիրով փոխանցում է իր գիտելիքներն ու փորձը երիտասարդներին՝ վստահ լինելով, որ հայկական խոհանոցի ապագան կախված է այն մարդկանցից, ովքեր կշարունակեն այս գործը նույն ուղիով:

Նրա համար խոհարարությունը երբեք միայն մասնագիտություն չի եղել: Դա մտածելակերպ է: Մշակույթ է: Պատասխանատվություն է սեփական

ժողովրդի պատմության ու համային հիշողության նկատմամբ:

Եվ հենց այդ վերաբերմունքն է, որ տարիների ընթացքում Յուրա Սարգսյանին դարձրել է ոչ միայն հաջողակ շեֆ-խոհարար, այլեւ այն մարդկանցից մեկը, որոնց շնորհիվ հայկական խոհանոցը շարունակում է արժանապատվորեն ներկայանալ միջազգային հարթակներում:

Յուրա Սարգսյանի համար հաջողությունը երբեք չի չափվել միայն մրցանակներով կամ բարձր կոչումներով: Նրա համար ամենամեծ գնահատականը եղել է այն, որ կարողացել է փոքրիկ հայկական գյուղը դարձնել միջազգային գաստրոնոմիական հետաքրքրության կենտրոններից մեկը:

Այսօր աշխարհի տարբեր երկրներից մարդիկ գալիս են Ծաղկունք: Նրանք գալիս են ոչ միայն համոտեսելու նրա պատրաստած ուտեստները, այլեւ տեսնելու, թե ինչպես կարելի է ազգային խոհանոցը վերածել մշակույթի, պատմության եւ հյուրընկալության կենդանի խորհրդանիշի: Այստեղ յուրաքանչյուր այց սկսվում է ժպիտով եւ ավարտվում այն զգացումով, որ Հայաստանը ճանաչեցին ոչ միայն տեսարժան վայրերով, այլեւ իր համերով:

Յուրա Սարգսյանի ստեղծած խոհանոցում առանձնահատուկ տեղ ունեն հայկական ավանդական բաղադրատոմսերը: Սակայն նա երբեք չի սահմանափակվել միայն դրանց վերարտադրությամբ: Նրա մոտեցումը միշտ եղել է պահպանել ավանդույթը՝ միաժամանակ այն ներկայացնելով ժամանակակից աշխարհին հասկանալի ու գրավիչ լեզվով: Այդ պատճառով նրա յուրաքանչյուր հեղինակային ուտեստ կարծես երկխոսություն է լինի անցյալի եւ ներկայի միջեւ:

Հատկապես մեծ ճանաչում է ստացել նրա հեղինակային ստեղծագործություններից մեկը՝ Սեւանի խեցեգետնից պատրաստված լուլա-քյաբաբը, որն այսօր շատերի կողմից արդեն ընկալվում է որպես ժամանակակից հայկական խոհանոցի այցեքարտերից մեկը: Այս ուտեստը լավագույն օրինակներից է, թե ինչպես կարելի է ազգային խոհարարական ավանդույթները համադրել նորարար մտածողության հետ՝ ստեղծելով մի բան, որն իր համով ու գաղափարով ճանաչելի է դառնում Հայաստանի սահմաններից դուրս:

Սակայն Յուրա Սարգսյանի գործունեությունը վաղուց արդեն դուրս է եկել մեկ ռեստորանի կամ մեկ խոհանոցի շրջանակներից:

Տարիների ընթացքում Յուրա Սարգսյանը բազմիցս ներկայացրել է Հայաստանը հեղինակավոր խոհարարական մրցույթներում՝ արժանանալով բարձր գնահատականների: Նա մասնակցել է Լյուքսեմբուրգում անցկացված համաշխարհային խոհարարական մրցույթին եւ արժանացել արծաթե մեդալի: Նրա մասնակցությամբ հայկական թիմը հաջողությամբ հանդես է եկել Դադստանում անցկացված միջազգային գաստրոնոմիական փառատոնում, որտեղ նվաճել է ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ: Հայաստանը պատվով ներկայացվել է նաեւ Եգիպտոսում անցկացված միջազգային խոհարարական ցուցահանդեսում, որտեղ հայկական ազգային ուտեստը ճանաչվել է լավագույններից մեկը:

«Տրաֆից մեկ ֆայլ».

ՀՈԿԻԿ ՍԱՔԱՆՅԱՆ

ՀՈԿԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վանաձոր

Հիպնոս, բժիշկ, հոգեթերապետ, էքստրասենս, հիպնոսոլոգների միջազգային մրցույթի «Ոսկե ձեռքեր» մրցանակակիր: 1990 թ.-ին Հոլանդիայում նրա ելույթները էքստրասենսների ֆեդերացիայի կողմից բարձր գնահատականի արժանացան, որի արդյունքում նրան շնորհվեց Սպիտակ Մոգի մագիստրոսական կոչում:

Հովիկ Սաքանյանը աշխարհում երկրորդ աճապարհն է, ով ցուցադրել է «Անցում պատի միջով» հնարքը:

Հոլանդիայում, Մոսկվայում, Սարատովում, Կրասնոդարում, Սոչիում, Ադլերում եւ այլ քաղաքների բազմամարդ ակումբներում նրա ելույթները համադրվում են համար ստեղծել են զարմանահրաշ, հետաքրքիր, կախարդական միջավայր: Ներկայացված ծրագրերը աչքի են ընկել մեկը մյուսից գեղեցիկ աճապարություններով անորսալի մանիպուլացիաներով եւ հնարքներով:

Հովիկ Սաքանյանը առանձնահատուկ անհատականություն է, ով իր ունակություններն ու հմտությունները չի ծառայեցնում միայն զվարճանքի եւ հաճելի ժամանցի նպատակին: Նա հաստատում է ծառի նման տվել է հզոր ճյուղեր:

Որդին՝ Կարենը, ժառանգելով հոր հմտությունները, աշխարհի շատ բեմերում մասնակցել է աճապարության եւ երգի միջազգային բազմաթիվ մրցույթների, արժանացել տարբեր փառատոններ:



Ձախից՝ Կարեն Թեյլոր, Կարինե Փիլոյան, Հովիկ Թեյլոր, Անի Թեյլոր հերթական ելույթից հետո:

րի դափնիների կոչման: Նա այսօր Անապայում նոր հիմնադրած Տիգրան Ավդալյանի անվան «Մուշ» արվեստի կենտրոնի ղեկավարն է:

Կարենի քույրը՝ Անիտա Թեյլորը, եւս աճապարական հմտություններ ունի, ով, ինչպես եւ Կարենը, աճապարության իր ուղղություններն ունի: Նա Ֆրանսիայում միջազգային մրցույթների, միկրոմագիայի դափնեկիր է:

Արվեստի դպրոցում ակտիվ գործունեություն է ծավալում Հովիկի կինը՝ Կարինե Փիլոյանը, որը միաժամանակ Անապայում «Իմ մայր» հայկական ընկերության նախագահն է:

«Արվեստի կենտրոնը ծառայում է տաղանդներ հայտնաբերելուն, ազգային մշակութային արժեքների շուրջ մարդկանց համախմբելուն», - ասում է Մոգը: «Փողոցը կարող է ազատել հոգիդ, բայց մտքերդ հետապնդում են քեզ, հոգիդ մնում է չմաքրված»: Արվեստի կենտրոնը, որտեղ ուսու-

ցանվում են լեզուներ, երգ, պար օգնում է միավորել մարդկանց, բեռնաթափել հոգիդ խոտոր մտքերից: Տիգրան Մեծը ստեղծեց գերպետություն, սակայն ազգը առավել նշանավորվեց Վառձապուհով, Մեսրոպ Մաշտոցով, հայ գրի ստեղծումով, որը նպաստեց հայի ինքնության պահպանությանը:

Հովիկ Սաքանյանի գործունեությունը նման է հրաշքի, սակայն ինքն այն կարծիքին է, որ եթե կա հրաշք, ապա դա ընդամենը բնության գիտելիքների պակաս իմացության արդյունք է:

Հովիկ Սաքանյանին նույն Օվիկ Թեյլորին, հանդիսատեսը ընդունում է որպես քայլող զմայլանք ու բարություն: Մարդ, ով առողջական, կրոնական, ազգային, հոգեւոր արժեքների պահպանության զինվոր է եւ անում է հնարավորը, որ մեր օրերում գոյաբանական սպառնալիքները ժամանակին եւ անհրաժեշտ լուծում ստանան:

Իմաստաբանական բառարան

Տոգայսուր հայերենը

Հայերենն առանձնահատուկ լեզու է ոչ միայն իր բառակազմական հնարքներով ու հարուստ բառապաշարով, այլ նաեւ երեւութների նկատմամբ իր ուրույն վերաբերմունքով:

Օրինակ մարդկանց գլխաքանակը հաշվելիս, հայերից բացի, մեզ շրջապատող ժողովուրդները գերադասում են որպես չափման միավոր օգտագործել հիմնականում թանձրացական բառեր՝ «մարդ», «անձ», երբեմն նաեւ «մարմին» թուրքերը՝ kii, ադրբեջանցիները՝ nfr, վրացիները՝ adamiani, պարսիկները՝ (գրական լեզվով) šan:

Մինչդեռ մենք՝ հայերս, մարդկանց թվաքանակը որոշելիս չափման միավորի մեջ հոգի ենք դնում եւ օգտագործում «հոգի» բառը. տասը հոգի, քսան հոգի... Իսկ մարդն իր խոսքի մեջ հոգի է դնում միայն այն ժամանակ, երբ ցանկանում է ողջ սերն ու ջերմությունը փոխանցել իր նմաններին:

Ընդ որում, մյուս բոլոր լեզուներում մարդկանց հաշվման միավորը արտահայտվում է արական սեռով թուրքերեն kii բառը նաեւ «տղամարդ» է նշանակում: Վրացերեն adamiani-ի հիմքում Ադամ բառն է՝ Աստծո ստեղծած առաջին տղամարդը, Եվայի անփոխարինելի ու անդավաճան ամուսինը:

Հայերենում «շունչ» բառն էլ է մարդկանց հաշվման միավոր համարվում: «Մեկ շնչին ընկնող» վիճակագրական ցուցանիշը դրա ապացույցներից է:

Մյուս լեզուներում (ռուսերենից բացի) այդ ցուցանիշն արտահայտվում է «գլուխ» բառով, ինչը մեզ համար մերժելի է, քանի որ «գլուխ» հաշվման միավորն օգտագործում ենք բացառապես կենդանիների գլխաքանակը ցույց տալու համար:

Շեղվելով բուն թեմայից, հիշենք, որ կուսակցությունների թվաքանակով Հայաստանում մեկ շնչին ընկնող ցուցանիշը միջազգային համեմատությամբ բավական բարձր է: 2026 թվականի տվյալներով Հայաստանում գրանցված է մոտ 128 կուսակցություն: Փաստորեն, Հայաստանում յուրաքանչյուր 24 հազար շնչին բաժին է ընկնում մեկ կուսակցություն:

Գնահատել է պետք հայերենն ու կուսակցությունների առատությունը:

Գ. ԱՄԵՔԵՆՅԱՆ

⇒ 2024 թվականին Յուրա Սարգսյանը կրկին միջազգային ուշադրության կենտրոնում էր: Կրասնոդարի երկրամասում անցկացված խոշոր գաստրոնոմիական մրցաշարում Հայաստանի հավաքականը, որի կազմում նա նույնպես ընդգրկված էր, զբաղեցրեց պատվավոր երրորդ տեղը՝ նվաճելով չորս արծաթե եւ ութ բրոնզե մեդալ: Այս հաջողությունները եւս մեկ անգամ հաստատեցին, որ հայկական խոհարարական դպրոցն այսօր մրցունակ է միջազգային ամենաբարձր մակարդակում:

Նրա գործունեությունը գնահատվել է նաեւ հայրենիքում: Յուրա Սարգսյանը պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի կողմից՝ հայկական ավանդական խոհանոցի պահպանման եւ զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար, արժանացել է Գեղարքունիքի մարզպետի գնահատանքին, բազմաթիվ մասնագիտական մրցանակների ու պատվոգրերի: Նրա ստեղծած «Tsaghkunk Chef House»-ը ճանաչվել է Հայաստանի լավագույն մարզային ռեստորաններից, ինչպես նաեւ արժանացել է «Երեւանից դուրս լավագույն ռեստորանային կոնցեպտ» մրցանակին: Բայց, թերեւս, ամենաբարձր գնահատականը 2026 թվականն էր: Միջազգային հեղինակավոր WHERETO EAT INTERNATIONAL 2026

Ծաղկունից մինչեւ միջազգային հեղինակավոր հարթակներ

մրցանակաբաշխության շրջանակում Յուրա Սարգսյանը ընդգրկվեց Հայաստանի «Տարվա շեֆ-խոհարար» անվանակարգի կարծ ցուցակում՝ հանրապետության լավագույն վեց շեֆ-խոհարարների թվում: Դա պատահական հաջողություն չէր, այլ երկար տարիների հետեւողական աշխատանքի եւ սեփական գործին անմնացորդ նվիրվածության բնական արդյունքը:

Ավելի խորհրդանշական է այն, որ այդ միջազգային ճանաչումը ծնվեց ոչ թե աշխարհի խոշոր մայրաքաղաքներից մեկում, այլ Գեղարքունիքի մարզի մի փոքրիկ գյուղում: Սա, թերեւս, Յուրայի կյանքի ամենակարեւոր ուղեբժն է. մեծ գործեր կարելի է անել նաեւ հայրենի հողի վրա, եթե մարդը հավատում է իր գաղափարին եւ սիրում է այն, ինչ ստեղծում է:

Այսօր Յուրա Սարգսյանի անունը վաղուց արդեն միայն հաջողակ շեֆ-խոհարարի անուն չէ: Այն ասոցացվում է հայկական խոհարարական մշակույթի պահպանման, նորարարության, մասնագիտական ազնվության եւ հայրենիքի նկատմամբ սիրո հետ:

Երբ աշխարհի տարբեր երկրներից

մարդիկ ճանապարհ են ընկնում դեպի Ծաղկունք, նրանք, զուգե, գալիս են համոտեսելու հայկական ուտեստները: Բայց հեռանալիս իրենց հետ տանում են շատ ավելին՝ փոքրիկ Հայաստանի հիշողությունը, հայկական տան ջերմությունը, մեր ժողովրդի հյուրընկալությունը եւ այն համոզմունքը, որ իսկական խոհանոցը սկսվում է ոչ թե խոհանոցում, այլ մարդու սրտում:

Հենց այդ պատճառով էլ Յուրա Սարգսյանի պատմությունը միայն մեկ հաջողակ խոհարարի կենսագրությունը չէ: Դա պատմություն է մարդու, որը կարողացավ իր մասնագիտությունը դարձնել մշակութային առաքելություն, իր հայրենի գյուղը՝ աշխարհի գաստրոնոմիական քարտեզի կարեւոր կանգառներից մեկը, իսկ հայկական խոհանոցը՝ ազգային արժանապատվության ու ստեղծագործ ոգու կենդանի խորհրդանիշ:

Եվ քանի դեռ Ծաղկունքում վառվում է օջախի կրակը, թոնրից հացի բույր է բարձրանում, իսկ Յուրա Սարգսյանի խոհանոցում ծնվում են նոր գաղափարներ ու նոր համեր, կարելի է վստահ ասել՝ հայկական խոհարարա-

կան արվեստը շարունակում է արժանի ձեռքերում ապրել, զարգանալ եւ... հաղթել:

«ԱԶԳ» ՀԱՐԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի

Հրատարակիչ
«ՎԱՅՆ ԹԵՔԵՅԱՆ»
սոցիալ-մշակութային
հիմնադրամ

Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com

www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԵՏԻՔԵՅԱՆ

Հաշվապահություն((գովազդ)
հեռ..**091 582960**

Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի

Թերթի միւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելոււ են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսոււմ ու չեն վերադարձոււմ:

“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960